«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի
«Ուրարտու» համալսարանի ռեկտոր՝
Հ.գ.դ., պրոֆեսոր Ս. Սեդրայան
05-ը հունիսի 2026 թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

ԻՌԱ ՀՐԱՆՏԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված «ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄՈԴԵԼԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ (ԸՄԲԻՇՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)» թեմայով ատենախոսության:

Իռա Հրանտի Պողոսյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է ժամանակակից մարզական գործունեության համատեքստում, հատկապես բարձրակարգ սպորտում, որոշման կայացման արդյունավետության, մարզիկների հաջողության առանցքային հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Ըմբշամարտում մրցակցության աճող ինտենսիվությունը և մրցումների քանակի ավելացումը պահանջում են մարզիկների պատրաստվածության նոր մոտեցումներ, ինչն էլ թեման անառարկելիորեն արդիական է դարձնում: Գիտականորեն հիմնավորված մեթոդաբանության մշակման պահանջարկն ավելանում է և անհրաժեշտ է դառնում դրանց կիրառումը մարզական գործունեության ոլորտում: Ըմբշամարտում որոշման կայացման մոդելների ուսումնասիրումը կարող է ծառայել որպես համեմատական հիմք՝այլ մարտարվեստների և սպորտաձևերի համար: Հետազոտությունը կարող է նպաստել տեսական գիտելիքների և գործնական մոտեցումների կատարելագործմանը,ինչը կբարձրացնի հայկական ըմբշամարտի միջազգային մրցունակությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները հստակ են ձևակերպված, ենթադրվող վարկածի հաստատման գործընթացը՝ըմբիշների որոշման կայացման ոճի արդյունավետության պայմանավորվածությունը հոգեֆիզիոլոգիական գործառույթների կայունությամբ,անձնային առանձնահատկություններով, գիտահետազոտական առումով մեծ արժեք է ներկայացնում:

Հետազոտության մեթոդաբանական հենքը կազմում են սպորտային հոգեբանության ժամանակակից հետազոտական մոտեցումները:

Ատենախոսության ներածությունը ներկայացնում թեմայի արդիականությունը, աշխատանքի նպատակը և խնդիրները, սահմանված հետազոտության վարկածը և ենթավարկածները, օբյեկտը, առարկան, տեսամեթոդաբանական հիմքերն ու կիրառված մեթոդները: Ներածության մեջ բացահայտված է ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության իրականացման փուլերն , ընտրանքի համակազմը, հետազոտության փորձաքննությունը, հուսալիությունն ու հավաստիությունը, գիտական նորույթը, նշված են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Մրցակցային պայմաններում մարզիկի որոշման կայացման հիմնախնդրի տեսամեթոդական վերլուծություն» գլխում վերլուծվում են որոշումների կայացման հիմնական տեսական մոտեցումները, մրցակցային պայմաններում որոշումների ուսումնասիրության ժամանակակից մեթոդները և սպորտային գործունեության մեջ որոշումների արդյունավետությանը ազդող գործոնները: 1.1. Որոշման կայացման հիմնական տեսական մոտեցումների համեմատական վերլուծություն ենթագլխում ներկայացվում են ռացիոնալ-նորմատիվ, սահմանափակ ռացիոնալության, հևրիստիկաների, բնական որոշումների կրկնակի մշակման տեսությունները: 1.2. Մրցակցային պայմաններում որոշման կայացման ուսումնասիրության ժամանակակից մոտեցումները ենթագլխում՝ կոգնիտիվ ծանրաբեռնվածության կառավարումը, իրավիճակային իրազեկվածությունը, տեսողական որոնման ռազմավարությունները, մրցակցային ճնշման ազդեցությունը և հուզական կարգավորման տեխնիկաները: 1.3. Որոշման կայացման գործոններն ռազմավարությունները սպորտային գործունեության մեջ ենթագլխում ներկայացվում են որոշումների արդյունավետության վրա ազդող գործոնները՝ կոգնիտիվ ընկալողական, ֆիզիկական, հուզական, տակտիկական, որոշումների կայացման վերլուծական և ինտուիտիվ մոտեցումները, ճանաչողության հիման վրա որոշումների մոդելը (Քլայն), որոշումների կայացման հմտությունների զարգացման մեթոդները:

Ատենախոսության երկրորդ՝ «Ըմբշամարտում որոշման կայացման հոգեբանական առանձնահատկությունները» գլխում վերլուծվում է ըմբշամարտ մարզաձևի հոգեբանական բնույթը, ըմբիշների որոշումների կայացման գործընթացների առանձնահատկությունները, որոշումների արդյունավետության վրա ազդող գործոնների համալիրը և արդյունավետ որոշումների կայացմանը նպաստող մոդելներն ու մեթոդները: 2.1. Ըմբշամարտ մարզաձևի առանձնահատկությունները ենթագլխում նկարագրվում են ըմբշամարտի անորոշությունը, ժամանակային մրցակցային դինամիկությունը, սահմանափակումները և ըմբիշների մասնագիտական գործունեության հոգեբանական պահանջները: 2.2. Ըմբշամարտում որոշման կայացման գործընթացների վերլուծություն ենթագլխում մանրամասն վերլուծվում են որոշումների կայացման փուլերը, տեղեկատվության մշակման հատկանիշները, ժամանակային

ճնշումը և հոգնածության ազդեցությունը: 2.3. Ըմբիշների որոշման կայացման արդյունավետության վրա ազդող գործոնները՝ համակարգված ներկայացվում են հոգեֆիզիոլոգիական, կոգնիտիվ, հուզական, մետակոգնիտիվ, անձնային և որոշումների կայացման ոճերի գործոնները: 2.4. Ըմբշամարտում արդյունավետ որոշումների կայացմանը նպաստող մոդելներ և մեթոդներ ենթագլխում ներկայացվում են որոշումների կայացման տեսական մոդելները, հմտությունների զարգացման մեթոդները և որոշումների ավտոմատացման մեխանիզմները:

Ատենախոսության երրորդ՝ «Ըմբիշների մրցակցային պայմաններում որոշման կայացման հետազոտության մեթոդաբանություն և արդյունքներ» գլխում ներկայացվում են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, կազմակերպման առանձնահատկությունները, օգտագործված մեթոդների հիմնավորումը և էմպիրիկ հետազոտության արդյունքների մանրամասն վերլուծությունը:

Եզրակացությունները հստակ են ձևակերպված, ամփոփում են առաջադրված խնդիրների գիտահետազոտական եզրահանգումները, ներկայացված են նաև գործնական առաջարկություններ, որոնք կիրառելի են մարզիչների պատրաստման համակարգում՝ որպես ուսումնական մոդուլներ,սպորտային ընտրության գործընթացում `երիտասարդ ըմբիշների ներուժի վաղ նույնականացման նպատակով, ինչպես նաև այլ մենամարտային սպորտաձևերում:

Հետազոտության ընթացքում ստացված տվյալները հաստատում են ենթադրությունը, որ մրցակցային պայմաններում բարձրակարգ ըմբիշների որոշման կայացման արդյունավետությունը պայմանավորված է հոգեֆիզիոլոգիական գործառույթների կայունությամբ, մասնավորապես հոգեշարժողական հակազդումների ճշգրտությամբ, ինչպես նաև որոշումների կայացման անհատական ոճերի վրա անդրադարձող անձնային առանձնահատկություններով:

Ստացված էմպիրիկ տվյալները հաստատում են վարկածն առ այն, որ հոգեֆիզիոլոգիական և կոգնիտիվ գործոնների համակարգված փոխազդեցությունը հանդիսանում է մրցակցային արդյունավետության հիմնաքարը, մետակոգնիտիվ գործառույթները կարևորագույն դեր ունեն որոշումների կայացման համակարգի ինքնակազմակերպման և ադապտացիայի գործում:

Ատենախոսության եզրակացություններն արտացոլում են հետազոտության արդյունքները:

Խորը և բազմաբնույթ վերլուծությունների արդյունքում ատենախոսին հաջողվել է լուծել առաջադրված հիմնական խնդիրները և հանգել կոնկրետ, հստակ եզրակացությունների,

որոնք ներկայացնում են ատենախոսության պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթների պահանջները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը և արտացոլում է հիմնական բովանդակությանը:

Ամփոփելով, կարելի է ընդհանրացնել, որ կատարված ծավալուն բազմաբովանդակ հետազոտությունը կարող է լրացնել ոլորտի բացը և հիմք հանդիսանալ հետագայում նմանատիպ հետազոտություններ անցկացնելու համար:

Մշակված մեթոդաբանությունը կարող է ներդրվել ինչպես ազգային հավաքականների պատրաստության գործընթացում, այնպես էլ մարզական դպրոցների և մարզիչների վերապատրաստման համակարգում: Հետազոտության արդյունքները փոխանցելի արժեք ունեն նաև այլ մենամարտային սպորտաձևերի համար որտեղ որոշումների արագ և ճիշտ կայացումը որոշիչ է մրցակցային հաջողության համար: Մոդելի ներդրումը կնպաստի հայկական ըմբշամարտի միջազգային մրցունակության բարձրացմանը և սպորտային հոգեբանության գործնական համակարգի զարգացմանը:

Միևնույն ժամանակ աշխատանքը զերծ չէ որոշ անճշտություններից և թերություններից.

1. Արժեքավոր հետազոտական արդյունքներ կարող էին գրանցվել նաև, եթե ուսումնասիրվեին մրցակցական հաջողությունը պայմանավորող այլ գործոններ ևս (հուզական ինտելեկտ, մոտիվացիա և այլն): Վերջիններիս հետազոտումն առավել հիմնավոր կդարձներ հոգեբանական գործոնների կարևոր դերը և հաջողության հասնելու գործընթացում դրանց էական նշանակությունը:
2. Առաջին գլխի ավարտին նպատակահարմար է ներկայացնել համառոտ ամփոփում՝ «Այսպիսով...» ձևակերպմամբ, ինչը կապահովի գլխի բովանդակային ամբողջականությունն ու տրամաբանական ավարտվածությունը:
3. Արդիականությունը հիմնավորումներով է, բայց ձևակերպման առումով ընդհանրական է, կարելի էր ներկայացնել հակիրճ:
4. Աշխատանքում առկա են մի շարք օտարածին եզրույթներ, որոնց համար նպատակահարմար է կիրառել հայերեն համարժեքները: Մասնավորապես՝ «սենսոմոտոր պարամետրեր» ձևակերպման փոխարեն՝ «զգայաշարժողական չափանիշներ», «ռեակցիա» բառի փոխարեն՝ «հակազդում» և այլն:
5. Առկա են որոշ տեխնիկական վրիպումներ (Էջեր՝ 1,8,10,14,22,53,87 և այլն):

Նշված թերություններն ու անճշտությունները չեն նսեմացնում հետազոտության գիտական արժեքը, ատենախոսությունը կատարված է գիտական բարձր մակարդակով, ունի

տեսական և գործնական նշանակություն: Այն ունի ինքնին ավարտուն տեսք, շարադրված է գրագետ, գիտական ոճով, պահպանված է ուսումնասիրված նյութերի տրամաբանական կապը, հստակ ներկայացված են հետազոտության արդյունքները:

Եզրակացություն

Գնահատելով թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ստացված արդյունքների հավաստիությունը, եզրակացությունների հիմնավորվածությունը, կարելի է հավաստել, որ Իռա Հրանտի Պողոսյանի «Մրցակցային պայմաններում որոշման կայացման արդյունավետ մոդելի կիրառումը պայմանավորող գործոնները (ըմբիշների օրինակով)» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն գիտական ուսումնասիրություն է: Աշխատանքը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԺԹ.00.01 – «ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ԺԹ.00.01 - «ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ:

Կարծիքը քննարկվել է Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի հոգեբանության ամբիոնի 2026 թ. հունիսի 5-ի ընդլայնված նիստում՝ (արձանագրություն թիվ 26/7), որին մասնակցել են՝ հ.գ.դ., պրոֆեսոր Ս. Մեղրակյան, հ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Նաղդյան, կ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Մխիթարյան, բ.գ.դ. Ժ. Բաբայան, հ.գ.թ., դոցենտ Հ. Պետրոսյան, հ.գ.թ., դոցենտ Ջ. Բաղդասարյան, հ.գ.թ., դոցենտ Ա. Նաղդյան, մ.գ.թ., դոցենտ Մ. Գևորգյան, հոգեբանական գիտությունների թեկնածուներ՝ Հ. Կիրակոսյան, Ս. Վարդանյան, Ա. Մուրադյան, Ա. Խաչատրյան, Ա. Լալայան:

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու»
համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ՝ հ.գ.թ., դոցենտ Հ. Պետրոսյան

Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու»
համալսարանի գիտքարտուղար՝ բ.գ.դ. Ժ. Բաբայան